

U. D/ptwty.

U²/₂ Fush
wzwnu 48

1904/10.

9C

891.99

69-2


1904

Հրատարակութիւն «Աս. Լիսիցեան եւ ԲՆԿ.» ԲՆԿԵՐՈՒԲԵԱՆ

Ա. ՇԵՆԱՆՅԱՆ

Ի Ի ՄԱՅ

ԱՆԱՌԱԿԸ



891.99
Ե. 69

15.07.2013

19 NOV 2011

891.39

0-69

48

Ս. ՇԵՆՈՆՑ

8-11

«ՍՏ. Լիսիցեան եւ Բնկ.» Հրատարակական
Բնկերութիւնը ընդունում է ինքնուրոյն, քաղ-
աժական եւ թարգմանական գրածքներ ժողո-
վրդական ընթերցանութեան համար, թէ՛ գե-
ղարւեստական եւ թէ՛ գիտական: Գրածքի ծա-
ւալը չորս (128 երես) տպագրական թերթից
աւելի չըպիտի լինի: Վարձատրութիւն տրւում
է 16 ռ. մինչև 48 ռուբլի տպագրական թեր-
թին, նայելով գրածքի տեսակին եւ արժանա-
ւորութեանը: Անյարմար դատւած ձեռագիրները
վերադարձւում են:

Հասցէ՝ Թիֆլիս, Бебутовская ул. д. 29
Т-во «Ст. Лисицианъ и К°.»

→ ՄԻ ՄԱՀ

ԱՆԱՌԱԿԸ ←

Երկու պատմածք

96/5

Հրատարակիւն	
«ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆ ԵՎ ԲՆԿ.»	
Բնկերութեան	
յատուկ գումարով ԴՍ.Ի.Թ.	ՇՍԼԱՄԵԱՆԻ
յիշատակին	



ԹԻՖԼԻՍ

Տպարան „ՀԵՐՄԵՍ“ Բնկ. Մադարեան փողոց № 15
1904 (75)

ՄԻ ՄԱՀ

Дозволено цензурою. Тифлисъ, 11 декабря 1904 г.

Ո՞վ չէր ճանաչում սվազցի Գրիգորին. հւստի չէր նրա կեանքը, նրա խելքը, նրա հմտութիւնը: Ըձառութեան մի անհուն, անսպառ աղբիւր էր նա, եղ օգտուում էին թէ իր համագիւղացիք և թէ ան- իր բոլոր պանդուխտները: Դա մի բարձրահասակ, լիթանդամ տղամարդ էր՝ մօտ յիսուն տարեկան, հա- կրելի թուիս դէմքով, մեծ, խոշոր աչքերով, խիտ քերով և լալն ճակատով: Զարմանալի յիշողութեան ըր՝ նա պարզ և անպաճոյճ, բայց գրաւիչ ոճով կը լամէր իր տեսած-լսածները, իր գլխին եկած-ան- ծները ամենայն մանրամասնութիւններով: Իսկ ին- ը չէր նա տեսել. ինչէր չէր նա քաշել իր փորձանք- րով լի երկար ու ձիգ փոթորկալի կեանքի ընթաց- ւմ:

Դեռ երիտասարդ, գրեթէ նորապսակ, հազիւ չորս տարի անցած՝ Գրիգորը, թողնելով հայրական օջախը, ոչն առաւ պանդխտական գաւազանը և վարդազոյն լսելով քայլերն ուղղեց դէպի Պօլիս:

Անգրագէտ, անարհեստ՝ ի՞նչ կարող էր անել. նչ գործ, ի՞նչ զբաղմունք պիտի նա զանէր Բօսֆօրի փերում: Նա ստեղծւած էր, կարծես, միմիայն հա-

մալութեան համար. նրա զօրեղ կազմածքը, անշափ
ոյժը բնութիւնը տեւել էր նրան միմիայն հակեր կրե-
լու համար: Եւ Գրիգորը դիմեց այդ աշխատանքին: Նա
քանում էր նաւահանգստի վրա: Ահագին բեռը նրա
համար մի խաղալիք էր, կարծես. վազելով, թռչկոտե-
լով էր տեղափոխում մէկ տեղից միւսը: Նրա ոյժի
համբաւը շուտով տարածւեց ամեն տեղ, նորեկ պան-
դէտի անունը արդէն յայտնի էր համալսական աշ-
խարհին:

Գրիգորը Պօլիս ֆապ ութը տարի: Համեստ,
պարկեշտ, ժուժկալ կեանք վարելով, նա իրան գրկում,
իր բերանից կտրում, փարա-փարայի վրա դնելով՝
մի փոքրիկ գումար էր շինում, տուն ուղարկում՝ իր
հօրն ու մօրը, որոնց ինամբին ու հակողութեանն էր
յանձնւած նրա երիտասարդ, կայտառ ամուսինը և
երկու փոքրիկ զաւակները:

Գրիգորը օրեր էր համարում՝ թէ երբ պիտի վե-
րադառնայ հայրենիք, գրկէ, համբուրէ, փայփայէ իր
չարածձի պզտիկներին: Գիշեր-ցերեկ նրա հոգսը, նրա
միտքը, նրա սիրտը այդ փոքրիկների հետ էր: Նա յիշ-
ում էր նրանց նոյն իսկ այն րոպէներին, երբ անհա-
գին բեռան տակ՝ թիկունքը կորացած, գէմքը կ'սքմ-
րած, աչքերը ուռած տնքում էր, գետինը թրջում ճա-
կատից առատ հոսող քրտինքով: Իր սիրելիներէ պատ-
կերը նոր ոյժ, նոր եռանդ էր տալիս, և նա անտրտունջ
քաշ էր տալիս համալսական չարքաշ կեանքը:

Գրիգորի նպատակը, նրա փափագն էր մի փոքրիկ
գումար շինել, ապա վերադառնալ իրանց գիւղը: Դա-
տարկ ձեռքով նա ի՞նչ երեսով կարող էր տուն դառ-
նալ: Իսկ այդ գումարը նա չէր կարողանում յետ գցել:
Չընայած որ նա կրկնապատկում էր իր աշխատանքը,

տաճախ բանում էր և գիշերները, բայց և այնպէս ձեռ-
քին բան չէր ֆնում:

Ի՞նչ անել:

Գրիգորը լսել էր, նրան շատ էին պատմել, որ
հեռու, ուլկիանոսի միւս կողմին աշխատանք աւելի շատ
կայ և աւելի լաւ է վարձատրւում: Իր հայրենակիցնե-
րից շատերն էին այնտեղ գնում. քանիցս առաջարկել
էին իրան էլ գնալ, բայց Գրիգորը միշտ մերժել էր.
նա պէտք է տուն վերադառնայ:

Իսկ վերադառնալն էլ նրան չէր աջողւում...

Եւ Գրիգորն ստիպւած ընտրեց Ամերիկայի
ամբան:

Յուսախար, իդձը չիրագործւած, ցաւով և վշտով
ողեց նա Պօլիսը: Նրա սիրտը կծկւում էր, որ չըկա-
րողացաւ հայրենիք դառնալ՝ իր ծնողների, իր ընտա-
նիքի, իր սիրելիների մօտ, որոնցից նա այժմ կրկին
եռանում էր, հեռանում էր տասնեակ հազար մղոննե-
րով, և ո՞վ գիտէ՝ քանի տարի, քանի ժամանակով...

Ծանօթ նաւերից մէկի մէջ նա վարձեց իրրե-
ստարակ մշակ և այդպէս հասաւ Մարսէյլ, ուր նրան
գասում էին շատ նեղութիւններ: Օրեր էին պատա-
ւած, որ նա քաղցած էր ֆնում, բայց և այնպէս նա
ընկճւում, չէր վհատւում: Ամերիկա գնալը հեշտ
է, փող էր հարկաւոր, և էլ մեծ փող: Ո՞րտեղից
տնէր այդ գումարը խեղճ պանդուխտը, որ Պօլսից
նեկնելիս իր վերջին փարան անգամ տուն էր ուղար-
կել: Երկար ու ձիգ օրեր այս-այն կողմ թափառելուց
ետոյ, Գրիգորին վերջապէս աջողեց է ծանօթ նա-
պատիւների օգնութեամբ մտնել մի նաւ, որ տաւար
հետի փոխադրէր Նիւ-Եօրք: Գրիգորին վարձեցին

որպէս տաւարապահ, տաւարապահ շողեւանի վրայ վարձը՝ իր փոխադրելը—Մարտէյլից Նիւ-Նօրք: Թէ այն նաւը վեց շաբաթից հազիւ պիտի հասնէր, բայ ի՞նչ արած, ուրիշ հնար չըկար:

Գրիգորը հասնում է ահա Ամերիկա՝ պանդուխտ անփող, խեղճ ու կրակ ժողովրդի այդ աւետեաց նո աշխարհը: Հասնում է նա Նիւ-Նօրք և հանդիպում նոր դժւարութիւնների, նոր և անծանօթ թշուառութիւնների:

Անծանօթ տեղական լեզւին, տեղական պայմաններին, զուրկ բարեկամներից և ծանօթներից: Ի՞նչ անէր նա, որ կողմը գնար, ո՞ւր գիմէր Նիւ-Նօրքի նման փոթորկալի, վիթխարի, անծայր քաղաքում: Հայ պանդուխտները այն ժամանակ դեռ քիչ էին, և ո՞վ գիտէ ո՞ւր էին նրանք գտնուում, որ գործարանում, որ յետ ընկած, կորած փողոցի մի անկիւնում: Երկար ժամանակ Գրիգորը թափառական կեանք էր վարում, շրջելով Նիւ-Նօրքի աղմկալի փողոցներում: Գիշերում էլ նա բաց երկնքի տակ, նաւահանգստի մօտակայքում Անձրե էր: Հայ պանդուխտը կուչ եկած, կծկւած մի շինութեան մուտքի տակ, այդպէս էր լուսացնում աշնանային գիշերները, ցուրտ, երկար ու ձիգ, անվերջ գիշերներ: Բայց մի անի չէր դուրս գալիս նրա կըրծքից, ոչ ոք բարախում էր սակայն մի նուրբ և քնքրաւոր:

Գործ չըկար: Երբեմն նրան աջողւում էր մի քանի հակ փոխադրել: Դրանով նա հաց էր գնում, որ լինում էր նրա միակ ուտելիքը: Բայց Գրիգորը դարձեալ չէր լքում, չէր յուսահատւում: Վհատութիւնը կարծես, նրա համար գոյութիւն չուէր:

Այդպէս տևում էր շաբաթներ, ամիսներ: Տաճկա-

հայ պանդուխտը կամաց-կամաց ընտելանում էր անգլիերէնին, ընտելանում էր քաղաքին. սկսում էր պտըտել, փնտրել, հարց ու փորձ անել. վերջիվերջոյ նրան աջողեց գտնել հայերի բնակատեղին, որոնք օգնութեան ձեռք հասցրին նորեկ հայրենակցին: Եւ ահա Գրիգորը մտնում է մի գերծարան: Շաբթի վերջին ստանում է իր վարձը: Նա ուրախ է. այդչափ օրավարձ նա առաջին անգամն էր ստանում իր կեանքում:

Այդ շաբաթից սկսեց նրա գործարանական, բանւորական կեանքը՝ լի դառնութեամբ և անդադար, անխոնջ աշխատանքով: Գրիգորը գործից փախչող չէր. աշխատանքը նրա միակ միջոցաւթիւնն էր օտարութեան մէջ. նրանով էր միայն նա մոռանում, ննջեցնում իր ցաւերը, իր դարդերը: Բաւական էր, որ նա քիչ պարապ մնար, և դարբնութիւնը դառնում էր անտանելի: Իսկ պարապ, անգործ ամիսներ չատ: Գործարանը վնաս կրելով գոցել է, կամ ընդհանուր գործադուլ է: Եւ ահա բանւորը՝ անգործ, պարապ, աննպատակ շրջում է փողոցից փողոց, գործարանից գործարան, մաշում նրանց շէնքերը.—գործ չըկայ: Շաբաթների, յաճախ և ամիսների ընթացքում գործ չըճարելով՝ պանդուխտը տեղափոխւում է մի ուրիշ քաղաք, այնտեղ էլ բախում է գործարանների դռները: Դարձեալ անօգուտ: Նա մեկնում է մի երկրորդ տեղ... Եւ այդպէս երկար ու ձիգ ամիսներ: Լաւ է, որ դեռ բարի հայրենակիցներ կան, որոնցից պարտք առնելով՝ կարելի է լինում ծայրը-ծայրին հասցնել, մի կերպ ապրել:

Իսկ ի՞նչ է անում այդ ժամանակ, ի՞նչով, ի՞նչ միջոցներով է ապրում հայրենիքում թողած ամբողջ ընտանիքը, որի միակ յոյսը, միակ նեցուկն ու ապաւէնը դարբն ուրդին կամ էրեկն է: Գրիգորի սիրտը

կծկւում էր, երբ միտն էր գցում իր սիրելիներին: Նա տանջւում, հալւում էր, բայց լուռ, ինքն իր մէջ: Նա արիւարար տանում էր անողորմ կեանքի հարւածները: Նա երբէք չէր արտայայտում իր ցաւը, իր դարձը, որ սակայն նրան կորզում, մաշում էր: Ո՛չ մի տրտուենք, ոչ մի հառաչանք չէր լսւում նրա բերնից: Մշտապէս խաղաղ էր նա, անվրդով, անխռով: Մի անգգայ լեռ էր, լեռ...

Թէև ծննդավայրից հեռու, ընտանիքից, սիրելիներից կտրւած, անջատւած, բայց ուշքը-միտքը միշտ նրանց հետ էր. նրանցով էր ոգևորւում, նրանցով շնչում, նրանցով միայն ապրում: Նա չէր խնայում ներանց համար ոչ մի բան, իր աշխատանքի մեծ մասը նրանց էր ուղարկում: Հոգ չէ, որ ինքը լաւ հագուստ երբէք չէր ունենում: Փոյթ չէ, որ ինքը նեղ ու մութ սենեակում էր բնակւում, քչով բաւականանում, իրան զրկում զւարճութիւններից և ուտելուց, միայն թէ իր ընտանիքը, իր սիրելիները պակասութիւն չզգան, սը-րան-նրան չըդիմեն, պարտք կամ փոխ չառնեն:

Տասն և հինգ տարի են ահա անցել այն օրից, երբ Գրիգորը ոտք դրեց Նիւ-Եօրք, և նրան գեռ չէր աջողակ հայրենիք վերադառնալ: Պանդուխտներից ձրն էր կա-րողանում այդ իղձն իրագործել: Իսկ նորեկների թիւը օր օրի վրայ աճում էր ու աճում: Խումբ-խումբ ու սլիս էին նրանք, գալիս, և երկիրը դատարկւում էր իր արու զաւակներից... Նիւ-Եօրքից սկսած Բօստօն, Ուստը, Լոլէլ, Լորէնս, Նեաշլայ, Պօրտլանդ, Ֆիլադելֆիա, Չիկագօ... Նրանց տուտը հասել էր նոյն իսկ հեռու Կալիֆօրնիա:

Այդ քաղաքներում տաճկահայ բանւորներն ապ-րում են զատ-զատ խմբերով: Տասը-քսան համագլխա-

ցիք, որոնք յաճախ միմեանց հետ ազգական կամ բա-րեկամ էլ են լինում, գտնւելով Ամերիկայի նման օտար հողի վրայ, բնականաբար, միանում, մի ընտանիք, մի օջաղ են կազմում: Բայց կիսատ, անկատար օջաղ. պակաս է նրա գլխատը սիւնը և նեցուկը՝ կինը, որի բացակայութիւնը նկատւում է իւրաքանչիւր քայլա-փոխում:

Հայ բանւորները չեն խառնւում, չեն շփուում տեղացի բանւորների հետ, չեն ապրում նրանց կեան-քով, ոգևորւում, ներշնչւում բանւոր դասակարգի սըր-տին-հոգուն մօտիկ, թանգ, սիրելի գաղափարներով և ձգտումներով: Նրա միտինգներին, ժողովներին հայ բանւորը շատ սակաւ է յաճախում. տեղացիների գոր-ծադուլներին նա գրեթէ չէ մասնակցում:

Ինչիցն է այդ անտարբերութիւնը:

Ամերիկացի բանւորը աւելի լաւ է վարձատըր-ւում, քան օտարերկրացին: Գործադուլների ժամանակ ամերիկացին հնար ունի երկար ամիսներ առանց աշ-խատանքի ապրել: Տրադ-Իւնիօն ընկերութեան հարուստ գանձարանն է նրան այդ միջոցները տալիս: Իսկ հայ բանւորներից շատ քչերին է աջողւում մոտեւ անգ-լիախօս բանւորների այդ հօրը կազմակերպութեան մէջ, որ ճիւղաւորւած, տարածւած է Միացեալ-Նա-հանգների արդիւնաբերական բոլոր կէտերում: Ամերի-կացու բանւորը՝ զինւած ընտրողական և ազատ քա-ղաքացի այլ իրաւունքներով, թէև սեփական տանից, հողից զուրկ, բայց իր ընտանիքում, իր հայրենիքումն է: Իսկ տաճկահայը՝ վաթանից պոկւած, ընտանիքից կտրւած, անջատւած, անծանօթ տեղական օրէնքնե-րին, լեզւին, պայմաններին,—առանձնացած, կղզիա-ցած կեանք է վարում: Նա այլ հոգսեր, այլ ցաւեր ու

նի, որ կորզում են նրա սիրտը, մաշում նրա կեանքը... Այդ ցուներից ազատ են նրան վիճակակից իտալացի, կանադացի և այլ գաղթական բանւորները...

Այդպէս կղզիացած կեանք էր վարում և Գրիգորը, որի շուրջն էին ժողովւել իր համագիւղացիք: Նրանք բնակւում էին մի անշուք տան մէջ, Լ. քաղաքի մի ծայրում: Մի յարկանի այդ տունը գրեթէ միայնակ կանգնած էր մի տափարակի վրա, հարեան տներից հեռացած, դրսից կրով ծածկած, որ տեղ-տեղ արդէն թափւել էր, պատուհանների ապակիներից շատերը կոտրւած, թղթով փոխարինած: Անցորդի վրա նա մի ինչ-որ տխուր տպաւորութիւն էր գործում: Ներսը աւելի անշուք, աւելի մռայլ և տխուր էր: Չորս ցածառաստաղ սենեակ էր և մի խոհանոց: Մի սեղան առանց սփռոցի, շուրջը մի քանի հատ կիսախարխուլ աթոռներ,—ահա ճաշարան — ընդունարանի կահ-կարասիքը, զարդ-զարդարանքը: Պատերը մերկ, պատառները պատռւած, կեղտ ու մրից սեացած: Միւս երեք սենեակները ննջարանների տեղ էին ծառայում. Իւրաքանչիւրում երկ-երկու մահճակալներ, նոյնպէս խարխուլ, թոկով կապկպած, ամրացրած: Վեց մահճակալ տասն և մէկ մարդու համար: Տեղաշրջերը առանց բարձերսի, առանց սաւանների, պատռւած, կեղտոտ: Կեղտ ու փոշիով ծածկւած էին պատերը, պատուհաններն ու յատակը: Իսկոյն նկատւում էր հայ կնոջ բացակայութիւնը, որ ամենաաղքատ խրճիթն անգամ դարձնում է վայելուչ, յստակ, սարքին-կարգին:

Տան մեծը Գրիգորն էր, որին յարգում, պատում էին անխտիր բոլոր տանեցիք: Նրան յարգում էին ոչ միայն նրա տարիքի պատճառով, այլ և նրա խելքի, հմտութեան և այն խնամքի համար, որ նա չէր խնա-

ւում իր համագիւղացիներին ոչ ոքին: Մի նեղ ընկած բոլէին, մի դժւար կացութեան ժամանակ նրան էին դիմում, նրա կարծիքը, նրա խորհուրդը հարցնում, նրա օգնութիւնը խնդրում: Եւ այդ ոչ միայն տանեցիք, այլ և Լ. քաղաքի միւս հայ պանդուխտներից շատ շատերը:

Գրիգորէնց տունը,—այդ անունով էր նա յայտնի Լ. քաղաքում,—բաց էր անխտիր բոլորի առջև: Երեկոները, մանաւանդ շաբաթ երեկոները, երբ վեց օր գործարանում աշխատելուց յետոյ՝ միւս օրը, կիւրակի, պիտի ազատ լինէին, այդ երեկոները պանդուխտների միւս տներից ժողովւում էին Գրիգորէնց մօտ զրոյց անելու: Թէև ուշ գիշեր էր լինում արդէն, բայց նրանց լոյսը դեռ վառ. պատմելիք, ասելիք շատ, այն էլ Գրիգորի պատմելիքը. ապա շաբաթւայ ընթացքում երկրից եկած նամակները, ստացած խաբրիկները: Ծիծաղ և քրքիշ թէև պակաս չէր այդ ժողովներից, բայց տըրտըր, մեղադրոյ ձայները միշտ գերակշռում էին: Հայխուր, մեղադրոյ ձայները միշտ գերակշռում էին: Հայբազում, բայց նրանք միմեանց երբէք չէին յայտնում. դրա մասին խօսակցութիւն անգամ չէր բացւում: Իւրաքանչիւրի ղէմքի վրա դրոշմւած էր այդ իղձը, այդ բաղձանքը:

Այդպէս կիսախաղաղ սահում էր ժամանակը, փայլուն յոյսերով լի օրերը:

Գալիս են այլ օրեր: Անցնում են շաբաթներ, միսներ՝ երկրից նամակ, լուր չըկայ:

Ի՞նչ է հղել. ի՞նչ է պատահել:

Ծոփէ և ուռել, բարձրացել, ջրհեղեղել, ծածկել ամեն ինչ: Համաճարակ մահն է անգթաբար հսկել,

տարել բոլորին... Մի հատ նամակը, մի փոքրիկ խաբ-
րիկն անգամ չորացել է: Վրդովեցուցիչ անյայտութիւ-
նը հալ ու մաշ է անում պանդուխտներին:

Տեղական թերթերի մէջ հեռագիրներ են լոյս
տեսնում, որ գուժում են երկրում տեղի ունեցած խո-
շոր աղէտներ... Այրել, քարուքանդ են արել տներ, ա-
ւաններ, ամբողջ գիւղեր... կոտորել, յօշոտել են հա-
րիւրաւոր, հազարաւոր ընտանիքներ, կիւն, մանուկ, ե-
րեխայ...

Եւրաբ մեր գիւղին չէ՞ն դիպել,—յուսահատաբար
հարց էին տալիս բանւորները: Եւրաբ մեր ընտանի-
քըն ազատւեց: Ի՞նչ եղաւ մայրս, ի՞նչ եղաւ քոյրս.
ձեր է որդիս, ձեր է կինս... Ա՛խ, ինչ՞ո՞ւ, ինչ՞ո՞ւ մենք
էլ այնտեղ չենք...

Տխուր ու տրտում պանդուխտները գնում էին
գործարան: «Նամակ չըկա՞յ»,—դա էր լինում առաջին
խօսքը, որ արտասանում էր բանւորը երեկոյեան տուն
դառնալիս. դա էր այժմ նրանց սովորական «բարի ի-
րիկունք»: Ընթրիքի ժամանակ ոչ մի խօսակցութիւն,
ոչ մի զրոյց. լուռ ու մունջ էին բոլորեքեան. նոյն իսկ
Գրիգորը, այն Գրիգորը, որին ծանօթ չէր վնասու-
թիւնը, որ միշտ ուրիշին սիրտ էր տալիս, քաջալի-
րում: Նա էլ լուռ էր և մեխմաղձոտ: Ընթրիքից յե-
տոյ նրանք սովորաբար նստում էին զրուցելու: Այժմ
ոչ ոք չէր ուզում խանդարել սարսափելի լուութիւնը:
Երբեմն պանդուխտներից մէկն ու մէկի հայեացքը մե-
քենայաբար դառնում էր դէպի Գրիգորը, որ արմունկ-
ները յենած ծնկներին, գլուխը խոնարհեցրած՝ ծիւղում
էր անընդհատ: Նա գիտէր, նա զգում էր, որ իրան
սպասում էին, և նա աշխատում, ճիգ էր թափում խօ-

սել, միամտացնել խեղճերին, բայց լեզուն հրաժար-
ւում էր, և նա բառ չէր գտնում ասելու:

«Աստուած ողորմած է»,—արտասանում էր նա,
բայց աւելի իրան, իր սիրտը, իր միտքը հանգստաց-
նելու, խաղաղացնելու համար, քան միւսներինը...

Անցնում են օրեր, շաբաթներ: Դարձեալ նամակ
չըկայ: Մի՞թէ բոլորն էլ մեռել, ոչ մի հոգի չէ մնա-
ցել, որ մի տող, մի երկու բառ գոնէ գրէ: Անցնում է
մի ամիս, երկու, բայց այն չարաբաստիկ թղթի կտորը
չըկայ ու չըկայ:

Աշնանային երեկոյ էր: Ամպամած երկինքը ցած-
րացել, իջել էր բոլորովին, մշուշով պատել, մշուշի
մէջ թաղել է. քաղաքը և ճնշում, խեղդում էր նրան:
Թանձր խաւար էր տիրում ամեն տեղ, բարակ անձրեւն
էլ մաղում էր անընդհատ: Ցուրտ էր, անտանելի ցուրտ:

Ցուրտ էր դուրսը. ցուրտ էր և խոնաւ, անկրակ
տներում, ուր կուչ եկած, իւրաքանչիւրը մի կողմ քա-
շւած, լուռ նստած էին պանդուխտ-բանւորները: Ոչ
ոք չէր շարժւում տեղից. կարծես, քարացել, անշնչա-
ցած էին: Միայն անձրեւի վշշոցն էր, որ խանդարում
էր այդ սպանիչ լուութիւնը: Նա թափւում էր շարու-
նակ, խփում պատուհաններին, որոնցով կաթ-կաթ ծո-
րալով եկել լիճ էր կապել յատակի վրայ:

Այնքան անհամբեր, սրտատրոփ սպասող լուրը
ստացել էր վերջապէս: Կռուկ չէր այն խաբրիկը
բերողը, ոչ էլ նամակ, այլ մի ակնառու, մի կենդա-
նի վկայ, մի պատանի, որ հրաշքով ազատւելով՝ մի-
սիօսարների օգնութեամբ ընկել էր Ամերիկա: Դա
Գրիգորի եղբորորդին էր:

Լաւ էր, հազար անգամ լաւ առաջւայ անյայ-

տութիւնը, քան այժմ: Այն ժամանակ իւրաքանչիւրը դեռ մի փոքրիկ յոյս ունէր՝ թէ իր ընտանիքը, իրանց տնեցիք ողջ են, հրաշքով ազատուել են սարսափելի աղէտից:

Իսկ այժմ: Տխուր իրականութիւնը անա այնտեղ է, այնտեղ՝ իւրաքանչիւրի աչքի առջև ցցւած: Նա պարզ տեսնում է իրանց տունը այրւելիս. անյազ բոցերը լափում են նրան. կրակի ճաթճթոցի միջից նա լսում է իր սիրելիների, իր հարազատների աղեկտոր ճիչն ու լացը, յուսահատ կոչն ու աղերսանքը... Կրակը մարել, վերջացել է: Լերկ, խանձոխ դառած պատերի միջից մուկ է միայն բարձրանում. շուրջը լուութիւն է տիրում. ոչ մի կենդանի շունչ. ամայութիւն կատարեալ...

— Կորսուաւ, լմնցաւ ամեն բան, — խոր հառաչ բաշելով շնչաց Գրիգորը ինքն իրան:

— Մենք մարդ չենք, մարդ, — բացականչեց նա դառնացած, — այլ նամուսից, պատուից գուրկ անասուններ՝ անարժան այս ծածկելու, — ասաց նա գլխարկը գետնին զարկելով: — Ի՞նչ ենք քանում մենք այս քանդուածում. ինչո՞ւ մենք էլ այնտեղ չենք, այնտեղ: Եթէ մեռնել-սպանւել է, այրւել-խորովւել է՝ բոլորս միասին մեռնէինք, բոլորս միասին կոտորւէինք, շան-նահատակ լինէինք...

— Այսուհետեւ էլ ո՞ւմ համար, էլ ինչո՞ւ համար ենք մենք ուղրում, — շարունակեց նա փոքր ընդմիջումից յետոյ, — ո՞ւմ համար ենք աշխատում: Ա՛խ, բախտ, բախտ: Այս ի՞նչ վատ աստղի տակ ծնեցինք մենք: Ի՞նչ մեղք, ի՞նչ յանցանք գործեցինք...

Գրիգորը երկար չէր լուում: Գժւած, կատաղած, որպէս վանդակի մէջ փակւած մի առիւծ, շանթեր էր

նա արձակում, գոռում, մոնչում... Բայց նրան պատասխանող չըկար. շուրջը, կարծես, ամայութիւն էր տիրում. աթոռների վրայ նստածները, կարծես, կենդանի մարդիկ չէին, այլ մի-մի ուրախաններ:

Արդէն ուշ գիշեր էր. անձրեն անդադար տեղում էր: Լ. քաղաքը խոր քնի մէջ նիւհում, հանգստանում էր: Քնած չէր միայն Գրիգորը: Միայնակ նստած սեղանի մօտ, գլուխը յենած աջ ձեռքի վրայ, երկար չէր կարողանում հանգստանալ. նա չէր ուզում, նրա ոյժից վեր էր, նա անգոր էր հաշտւել այն սարսափելի մըտքի հետ, որ ինքը դեռ երէկ ընտանիքի, որդոց տէր, իսկ այժմ նրանցից զրկւած, որբւայրի, անհայր, անմայր, անտուն մի թշուառական է: Արտասուքը խեղդում էր նրան. բայց նա այնքան ոյժ ունէր, որ կարողացաւ հայրենակիցների ներկայութեամբ իրան զնայել: Այժմ միայնացած նա արտասուում, նա ողբում, նա հեկեկում էր, որպէս մի մահուկ: Միւս բանորհները թէեւ պառկած, բայց նրանք էլ քնած չէին. անկողնում մի կողքից միւսի վրա էին շուռ գալիս. քուն, հանգստութիւն, անդորրութիւն փախել էր նրանցից: Արտասուքը նրանց էլ խեղդում էր և թրջելով այտները՝ խոշոր կաթիլներով թափւում կոշտ բարձերի վրա:

Լուսաղէմին, երբ պանդուխտները զարթնեցին, տեսան Գրիգորին նոյն տեղը՝ սեղանի մօտ թեկն տւած, նստած: Այդ գիշեր նա անկողին չէր մտել, աչք չէր փակել: Բանորհները շտապ-շտապ հագնւեցին և առանց սովորական նախաճաշիկն անելու ուղեւորեցին դէպի գործարան:

Գրիգորը մնաց մենակ: Գործարանի սուկիչի ձայնը նրան ցնցեց, սթափեցրեց: Նա տեղից բարձրացաւ

և մտածողոր, մեքենայաբար դուրս եկաւ տնից: Անձ-
րեւ դեռ չէր դադարել, այլ բարակ, հանդարտ կերպով
մաղում էր: Հազարաւոր բանուր-բանուրուհիներ ցըր-
տից կուչ եկած, լուռ, անխօս շտապում էին գործա-
րան: Գրիգորը միանալով նրանց հետ, անհետացաւ
խառնիճաղանջ ամբոխի մէջ: Մի քանի բոպէից յետոյ
նա արդէն գտնուում էր կտաւի գործարանում, իր մե-
քենաների առջև:

Գրիգորը իր ձեռքի տակ ունէր վեց մեքենայ,
որոնց բանեցնելը պահանջում է մեծ հմտութիւն, մա-
նաւանդ մեծ ուշադրութիւն: Վեց մեքենաները գործում
էին միաժամանակ. յանկարծ մէկի իլիկի թելն է քօլը
ընկնում կամ կտրւում, անհրաժեշտ է անմիջապէս վա-
զել, կարգի բերել. մի այլ տեղ իլիկներէ թելն է վեր-
ջացել, հարկաւոր է նորը դնել, ապա մաքրել գոր-
ծածքը դուրս ցցւող թելերի ծայրերից... Հանգըս-
տութիւն չը կա. շարունակ ոտքի վրա, աշաւուրջ,
միշտ հակելիս, միշտ դիտելիս, մի բոպէ անգամ ան-
հնար է անուշադիր լինել. դարան մտած որսկան շան
նման, սպասողական դիրք ընդունած՝ պէտք է հակել:
Եւ այդպէս ամբողջ օրը՝ առաւօտեան ժամի վեցից մինչ
կէսօր, ապա մէկից—վեցը—հօթը:

Առաւօտեան վեցին գործարանի հինգ հազար բան-
ւորները զինւորական ճշտապահութեամբ արդէն զըտ-
նում էին մեքենաների առջև՝ իրանց պահականոցում:
Եռյարկանի վիթխարի շինութիւնը նորից կենդանացած՝
անաւոր, հուժկու, խլացուցիչ գլրղիւնով գործում էր
մոլեգնաբար:

Գրիգորն էլ, որպէս մի կենդանի մեքենայ, գոր-
ծում էր անդադար, բայց ոչ առաջւայ աշխուժութեամբ
և եռանդով: Մի քանի ժամ աշխատելուց յետոյ նրա

ոյժերը մատնեցին նրան: Վաղուց էր, որ երկու մե-
քենայի մի քանի իլիկները՝ առանց թել, պտոյտ էին
գալիս աննպատակաբար: Եւ Գրիգորը այդ չէր նկա-
տում:

Նրա հարեան իրլանդացի ժակը, որ մի առանձին
յարգանքով էր վերաբերում դէպի հայ բանուրը, վա-
զելով մօտեցաւ նրան և ձեռքը մեկնելով դէպի այն
երկու մեքենաները՝ յայտնեց եղելութիւնը: Գրիգորը
լրացրեց, կարգի բերաւ իլիկները: Բայց մի ժամ յե-
տոյ նրա մէկ մեքենան կանգնած, այլ ևս չէր բանում:

Իրլանդացի բանուրը մնացել էր զարմացած:
Դեռ առաւօտեան գործարան մտնելիս Գրիգորն իրան
չը բարեկեց. իր «բարի լոյսին» անգամ նա չը պատաս-
խանեց: Հայ պահուստի դժգոյն, միջնած, տխուր դէմքը
չէր հեռանում ժակի աչքից. «Ի՞նչ է պատահել սրան»,
— հարց էր տալիս իրլանդացին ինքն իրան: Նա մօ-
տեցաւ Գրիգորին և ականջին բարձր ձայնով գոռաց,
որ կառավարչից թոյլտուութիւն խնդրէ և գնայ տուն,
քանի որ հիւանդ է:— Գործարանում մեքենաների դղը-
ղիւնից անհնարին էր կամաց, ցածր խօսել:— Գրիգորը
ոչինչ չասաց, միայն ձեռքով բացասական նշան արեց:

Հէնց այդ վայրկեանին եկաւ գործարանի վերա-
կացուն, որ մի հեղ և բարի մարդ էր—մի երեւոյթ, որ
շատ հազւագիւտ է գործարանական կեանքում. կա-
ռավարիչ և... բարի... Նա Գրիգորին երբէք նկատո-
ղութիւն չէր արել և առիթ էլ չէր ունեցել. Գրիգորի
նման բարեխիղճ, մաքուր, յստակ բանող շատ քիչ կար:
Այդ էր պատճառը, որ վերակացուն մի առանձին սի-
րով էր վերաբերում Գրիգորին: Երբ տեսաւ մե-
քենան կանգնած, նա սկզբում բոլորովին ապշեց, ապա
տեսնելով հայ բանուրին այնպէս ընկճւած, զալկա-

ցած, յանկարծ յիշեց տեղական թերթերի Պօլսից ստացած հեռագիրները, թղթակցութիւնները: Մի ստորառու անցաւ նրա մարմնով, և նա առանց մի բառ ասելու հեռացաւ, զնաց այդ բաժանմունքից, որպէս թէ ոչինչ չէր նկատած:

Հնչեց ճաշի սուլիչը: Մեքենաները կանգ առան: Գործարանի փակւած դռները բացւեցին և բանուորները դուրս խուժեցին դէպի հարեան ճաշարանները: Մարդ, կին, աղջիկ, փոքրիկ տղայք, բոլոր հասակի և ազգութեան: Դուրս եկաւ և Գրիգորը. միայն նա ճաշարան չը գնաց, այլ անցաւ գործարանի մօտ գլխուղ մի խուլ փողոց և սկսեց յետ ու առաջ քայլել՝ չը նայած ցրտին և անընդհատ տեղացող անձրևին:

Անցաւ ճաշի ժամը, նա մեղմ, ծանր քայլերով վերադարձաւ իր մեքենաների մօտ,

Երկու ժամ գործելուց յետոյ, Գրիգորը՝ ուժասպառ, թուլացած, քիչ էր մնում, որ զոհ լինէր իր անզգուշութեան: Մեքենան ուղղելիս այնչափ մօտեցել էր նա միւս մեքենային, որ վերջնիս անխել՝ բռնելով նրա փեշը, ձգում էր. մի վայրկեան էլ՝ և նա պիտի նետէր երկու մեքենաների նեղ արանքը, եթէ միայն իրլանդացին չըլինէր: Ժակը՝ մի ոստիւն գործելով, բռնեց Գրիգորին և այնպէս ոյժով դէպ իրան քաշեց, որ նրա վերի հագստի կէսը պատռւելով՝ մնաց մեքենայի վրայ: Գրիգորը քիչ օրօրեաց և որպէս մի գընդակ վայր ընկաւ յատակի վրայ: Ժակը՝ մի ակնթարթութեամբ կանգնեցնելով իրանց մեքենաները, սրտատրոփ վազեց նրա օգնութեան: Գրիգորին անմիջապէս կառք նստեցնելով՝ իրլանդացու հետ միասին տուն ուղարկեցին:

Պանդուխտների բնակարանը հասնելով, Ժակը չը

հեռացաւ հիւանդի մօտից, թէև այդպիսով նա զրկւում էր կէսօրւայ աշխատանքից: Նա պառկեցրեց Գրիգորին, ինքն էլ մօտը նստեց՝ սպասելով իր դժբախտ հարևանի հայրենակիցներին:

Ժակը վաղուց է որ ճանաչում էր Գրիգորին. նրա հետ հինգ տարուց աւել էր, որ տնքում էր մի և նոյն գործարանում, մի և նոյն մեքենաների վրա: Նա երբէք այդ հայից մի վատ խօսք չէր լսել, վատ, անազնիւ գործ չէր տեսել: Ժակը նրան յարգում, սիրում էր. չէր թագցնում նրանից ոչ մի բան, — այնչափ մօտեցել, մշտեղմացել էին նրանք միմեանց: Իրլանդացուն յայտնի էր ծածկաստանի աղէտը: Բայց նրան դեռ յայտնի չէր Գրիգորի եղբորորդու գալուստը. այժմ տեսնելով այդ պատանու լացը, հեկեկանքը և իմանալով նրա ուժ, ինչ լինելը, իսկոյն հասկացաւ ամեն բան և լսեց:

Գրիգորը, աչքերը գցած առաստաղի մի կէտի վրա՝ լուռ պառկած էր: Իրլանդացին նստած նրա գլխատակին՝ նոյնպէս լուռ էր և տրտում: Նա մի բառ անգամ չարտասանեց. նա չէր համարձակւում, լեզուն չէր պատում հարցնել կամ սիրտ տալ, մխիթարել: Սփոփել, մխիթարել սովորական դատարկ բառերով և ֆրազներով, — այդ և անտեղի է, և աւելորդ: Նրանցով պանդխտի խոցուած սիրտը պիտի նորից տրորէր, կրակի վրայ նորից իւղ ածէր:

Երեկոյ էր: Գործարանի շէկը սուլեց, բայց մի այնպիսի մելամաղձոտ, չարագուշակ հնչիւններով, կարծես, շոգինաւի սիրէնը (sirène) լինէր, որ փոթորկի, վտանգի ժամանակ յուսահատ, աղեկտուր, չարագուծ հնչիւններով օգնութիւն է հայցում: Բայց ովկիանոսի անհուն հորիզոնի վրայ նա չէ երևում. սիրէնը կրկին

և կրկին սուլում է, սուլում. դարձեալ իզո՛ւր: Նրա ձայնը ոչ մի տեղ արձագանք չէ գտնում: Գրիգորին թւում էր, թէ ինքը գտնւում է այդ շոգենաւի վրա իր զաւակների և կնոջ հետ միասին: Նաւը խորտակւում է, նա սուզւում է ջրի մէջ: Գրիգորը ամուր գըրկած իր սիրելիներին, նրանց բարձրացրել, պարզել է դէպի վեր, դէպի երկինք: Զուրը ծփանք տալով կամաց-կամաց նաւն է թափւում: Նրանք խըւում, խեղդւում են:

«Օգնութիւն, օգնութիւն»,—աղաղակում է Գրիգորը և զարթնում:

Նրա շուրջը տխուր և գլխակոր կանգնած էին պանդուխտ բանւորները, որոնք լսելով տեղի ունեցած դժբախտութեան մասին՝ շտապել եկել էին: Եթէ նրա ներկայութիւնը, նրա կենդանի խօսքն էլ մեղանից պակասէ, ի՞նչ կը լինի մեր 'դրութիւնը,—խորհում էին բանւորները: Սակայն այս նոր դժբախտութիւնը տարօրինակ, անընական չէր թւում նրանց. գոհերի երկար շարքի վրա մի գոհ էլ է աւելանում, ուրիշ ոչինչ... Սրտատրոփ, հեւալով շտապել էին նրանք տուն: Տեսնելով ժակին Գրիգորի մօտ նստած, նրանք գունատեցին. բայց բարի ժակը միամտացրեց՝ յայտնելով, որ Գրիգորին ոչ մի երկիւղ չէ սպառնում: Եւ իրօք՝ մեքենան նրան փաստ չէր տւել:

Մահճակալի շուրջը պանդուխտները գլխարկներով, առանց հանւելու, առանց լացելու, կեղտ ու մուրի մէջ թաթախւած, լուռ, մտամոլոր շարունակ կանգնած՝ սպասում էին, կարծես: Բոլորն էլ կիսահիւանդ գրութեան մէջ. վիշտը հալել, մաշել էր ամենին:

Արդէն ուշ գիշեր էր, երբ իրլանդացին՝ «բարի գիշեր» մաղթելով, տխուր տպաւորութիւնների տակ

հեռացաւ պանդուխտների բնակարանից:

Դուրսը անձրեւն արդէն դադարել էր, երկինքը պարզւել. ջինջ կապուտակում փայլում էին աստղերը վառվռուն: Խաղաղ էր բնութիւնը և հանդարտ. միայն լսում էր հեռից Լ. գետի ալիքների ծփանքը: Նրանք մէկը միւսին հետեւելով գալիս, զարնւում էին ժայռոտ ափերին, շառաչում, աղակում և լալով, ողբալով յետ ու յետ նահանջում, գնում, գրկախառնւում էին միւսների հետ և այդպէս միացած նորից յորձանք տալիս ուժգին: Բայց իզո՛ւր: Սակայն ալիքները չեն ընկճում, չեն դադարում: Կատաղաբար գոռալով և նորից ու նորից զարնւելով ափերին՝ ճիգ էին թափում, անդադար, անվերջ կռւում ու կռւում:

Մի անգամ անկողին ընկնելով՝ Գրիգորը այլ ևս չըկարողացաւ թողնել նրան: Նրա հայրենակիցները գիշեր-ցերեկ հոգում, աշխատում էին, չէին խնայում ոչ մի միջոց: Նրանցից մէկն ու մէկը հիւանդի մօտ էր ֆսում, ցերեկները հերթով՝ որպէս զի չըզրկէին գործարանի տեղից, գիշերները՝ ով պատահէր: Եւ այդպէս ամբողջ ձմեռ:

Բայց այդ ամեն ջանքերը, բժշկական օգնութիւն, դեղ և այլն, բոլորը, բոլորն էլ, աւանդ, իզուր անցան: Գրիգորը օր օրի վրա նիհարում, հալւում էր: Դէմքը բոլորովին գունատւել, աչքերը խորն ընկել, ձեռքերը, բանւորական կոշտ, կոպիտ ձեռքերը բարակել, քնքշացել էին: Գլխի մազերն ու միւրուքը ճերմակել, ոչ մի հատ սև մազ չէր ֆնացել: Նախկին աշխոյժ, առոյգ, հսկայ, ուժեղ Գրիգորի ուրւականն էր միայն ֆնացել: Նա չէր խօսում, չէր պատմում. լուռ մտքերի

մէջ խորասուզւած, անուշադիր ուրիշների պատմածներին, անտարբեր շուրջը վխտող, հուացող, անյողողող ընթացող կեանքին:

Ապրիլ ամիսն էր, երբ ընութիւնը՝ պճնւած, զարդարւած, հրապուրում, գմայլեցնում է պմեն մի էակ: Խոտը բուսել, աճել, բարձրացել էր. ծառերը գոյնզգոյն ծաղիկներով և տերևներով ծածկւել, գեղեցկապէս պճնւել. բուրում էր անոյշ հոտը: Թռչունները, երգն ու ճլվլոցը, արագահոս առուների կարկաչիւնը, երեխաների ուրախ—գլարթ ճիչն ու քրքիշը... Կեանք էր շնչում, կեանք էր փչում ամեն մի կողմից, ամեն մի անկիւնից: Հազար ու մի պշրանքներով զարդարւած ընութիւնը՝ մշտապէս կայտառ, մշտապէս աշխոյժ, հրաւէր էր կարգում. նա ձայն էր տալիս, նա կոչ էր անում՝ ապրել, վայելել իր բիւր և բիւր բարիքները:

Գրիգորը պառկած, աչքը յառել էր դէպի բաց պատուհանը. կարծես հիանում էր ընութեան այդ հրաշալիքներով: Ի՞նչ էր նա մտածում. ի՞նչ էր խորհում. ո՞ւմ էր նա յիշում... Երկար նայում էր նա. ամբողջ ժամերով նա չընեռացրեց աչքը պատուհանից, բայց ոչ մի բացականութիւն, ոչ մի բառ. միայն արտասուքի երկու խոշոր կաթիլներ դուրս ցոլացին նրա աչքերից և՛ թրջելով գունատ, նիհար այտերը, ընկան բարձի վրա:

Քիչ յետոյ հիւանդը՝ դիմելով իր մօտ նստած այդ օրւայ հերթապահ պանդխտին, ասաց.

— Թովմաս, այս տանը բոլորից մեծը դու ես այժմ: Ես գնում, ես մեռնում եմ... Մի խնդիրք ունեմ. նայիր այդ փոքրիկին, ինչպէս քո հարազատ որդուն: Ես՝ դիտես որ այլ ես ոչ ոք և ոչինչ չունեմ. դա է միայն մնացել մեր ամբողջ տոհմից...

Այս խօսքերի վրա Թովմասը բռնեց հիւանդի ձեռքը և՛ սեղմելով շրթունքներին, արտասուխառն ջերմ համբոյրներով նրան ծածկեց:

— Կա է, ի՞նչ ես անում, երեսայ չես դու,— հազիւ լսելի ձայնով ասաց Գրիգորը:

Այդ եղաւ նրա վերջին խօսքը:

Այդ օրը, երեկոյեան դէմ, պանդուխտներից մէկը՝ ներս գալով հիւանդի սենեակը և տեսնելով Թովմասին այլայլւած, շփոթւած,— շնչասպառ, հեղուկ շշնջաց.

— Ի՞նչ կայ:

— Մեռաւ,— պատասխանեց Թովմասը խորհրդաւոր ձայնով: Նա տեղից բարձրացաւ և հանգուցեալի ձեռքերը կամացուկ, զգուշութեամբ կրծքին խաչելով՝ մնաց տեղը անշարժ մեխւած. աչքը յառած այն վշտամաշ, դժգոյն դէմքին, նա լուռ արտասուում էր: Միւս բանուրը մեքենայաբար յետ-յետ նահանջեց և թուլացած վայր ընկաւ մի աթոռի վրա. գլուխն առնելով ձեռքերի մէջ՝ մնաց նոյնպէս անշալժ, արձանացած: Միւտը կտոր-կտոր էր լինում. նա սղբում էր այդ կորուստը. միայն նա լաց չէր լինում, արտասուքը չորացել, ցամաքել էր նրա աչքերից:

Հետեւեալ օրը Գրիգորի թաղումն էր:

Մինչ բահանան կատարում էր թաղման հանդէսը, մի բուն պանդուխտներ, որոնց մէջ էր և իրլանդացի ժակը, գլխակոր, աչքերը յառած նոր ծածկւած գեղեզմանի վրա, լուռ արտասուում էին:

Բահանան վերջացրեց: Բայց բանուրները երկար չէին հեռանում գերեզմանատնից. նոր գոյացած թմրի շուրջը նստած՝ անխօս և լուռ էին նրանք: Լուռ էր և ընութիւնը՝ խաղաղ, հանգիստ: Օրը պայծառ, գեղեցիկ, շուրջը հարուստ, փարթամ բուսականութիւն: Փչում

էր մեղմ հովը և ծառերի տերեւները կամացուկ շար-
ժում: Սօսափում էին տերեւները, շշնջում, օրօր թո-
թովում վշտով տոգորւած բանւորներին, մեղմ եր-
գում, հանգիստ կարգում գերեզման իջած բազմատանջ
ոսկորներին:

Ա Ն Ա Ռ Ա Կ Ը

—Մի բաժակ վիսկի (օղի),—հրամայեց մի երի-
տասարդ, ոտք դնելով Նիւ-Եօրքի 27-դ փողոցի վրա
դանւոյ մի փոքրիկ զինետուն:

Սպասաւորները անմիջապէս կատարեցին անծա-
նօթ յաճախողի հրամանը:

—Մի բաժակ էլ,—ասաց նա՝ դիմելով իրան ծա-
ռայող տղային:

—Մէկն էլ,—հրամայեց երիտասարդը, խփելով
դատարկած բաժակը իր առջևը դրած մարմարէ կլոր
սեղանին: Եւ այդպէս մէկ մէկի յետեից նա պարպեց
ութը բաժակ: Գինետան ծառայողներն անգամ մնացել
էին զարմացած:

«Ո՞վ է այս երիտասարդը,—հարցնում էին նրանք
միմեանց: Սեւահայ, սև մազերով, թուխ դէմքով: Ան-
շուշտ, իտալացի է կամ սպանացի: Մինչ սպասաւոր-
ները զբաղւած էին ենթադրութիւններով,—երիտա-
սարդը լուռ, անխօս դատարկում էր օղիի բաժակները:

Կսթնած, գլուխը յենած աջ ձեռքին, յօնքերը կի-
տած, տխուր, մտախոհ՝ նայում էր նա վիսկիի բաժա-
կին: Ո՛րքան դառն էր նա՝ այդ բաժակը, կատարեալ
թոյն: Եւ այդ թոյնի մէջ նա որոնում էր իր սիրտը
կորցող ցաւերի դարմանը. նրանից էր սպասում, նրա-
նից հայցում և՛ սփոփանք, և՛ մխիթարանք:

Խեղակորոյս, ուշքով-մտքով թռած, վերացած հե-

ոճւ, հեոճւ, երիտասարդը չէր էլ նկատում այն հայ-
եացքները, որ իրան հին յառած:

— Ո՞վ է սա. ի՞նչ կայ, ի՞նչ է պատահել, — հարց-
նում էր սպասաւորներից կասսայի յետև նստած գան-
ձապահ տիկինը:

— Ասացէ՛ք, խնդրեմ, դուք ռոտեղացի էք, ռո քա-
ղաքից, ռո երկրից, — հարցրեց վերջապէս մի բանւոր՝
ձեռքերը կողքին դրած մօտենալով օտարականին:

— Հայ եմ, — պատասխանեց երիտասարդը և յոռեց:
Այդ բառը սթափեցրեց շատերին: Ո՞վ չէր լսել, ո՞ւմ
չէր յայտնի այդ հարաբաստիկ անունը, որ ամիսներ,
տարիներ շարունակ չէր իջնում լրագիրների էջերից:
Այդ մի հատիկ բառը պատմեց տարօրինակ երիտա-
սարդի վիշտն ու ցաւը:

— Armenian? (հայ) — գոչեցին միաձայն բոլո-
րեքեան՝ մի ցաւալցական համակրանք արտայայտելով
այդ բացականչութեամբ:

— Անշուշտ, ձեզ էլ է ֆլաս հասել, — սիրտ առնե-
լով հարցրեց գանձապահ տիկինը, որ միւսներէից աւել-
ի էր հետաքրքրւած օտարականով:

Երիտասարդը ժպտաց, տխուր, դառն ժպիտով:
Տիկինը զղջաց իւր անտեղի հարցի համար:

— Ի՞նչ էլ է բաժին ընկել, հարցնում էք դուք:
Ես երկու անձ ունէի աշխարհիս երեսին. մինուձար
մայրս և իմ ընտրած, իմ մօր հաւանած հարսնացու:
Մայրս սպանւեց՝ նրան պաշտպանելիս, իսկ միւսը...
իսկ նշանածս...

Պանդուխտը չըվերջացրեց իր խօսքը: Նորից զը-
լուխը խոնարհեցրեց սեղանի վրա՝ աչքը գցելով օդիով
լի բաժակին: Բոպէական լուսթիւն տիրեց գինետանը.
ոչ որ չէր խօսում, չէր վիճում:

— Հայի կենացը, — գոչեց գինովցած մի բանւոր:
Բոլորն էլ բարկացած նայեցին դէպի այն կողմը, որ-
տեղից դուրս ելաւ այդ առաջարկութիւնը:

Ուշ գիշեր էր արդէն: Գինետունը կամաց-կամաց
դատարկւում էր: Թիւրքահայը միենոյն տեղը նստած՝
չէր հեռանում օդիի բաժակից:

— Ամօթ չէ՞, բաւական չէ՞... Ո՞ւր ես, ռոտեղեր
ես ման գալիս, — ասաց տաճկահայ բարբառով մի բան-
ւոր՝ ներս մտնելով գինետուն:

Երիտասարդը բարձրացրեց իր գինովցած գլուխը,
բարկացած նայեց իրան յանդիմանողին, բայց ոչինչ
չըպատասխանեց:

— Այժմ էլ ամիս տեղն ընտրեցիր, — շարունակեց
նորեկը: Երիտասարդը դարձեալ ոչինչ չասաց: Մեքե-
նայարար տեղից վեր կենալով՝ մօտեցաւ նա բանւո-
րին, բռնեց նրա ձեռքը, և այդպէս թև թևի տւած
դուրս եկան փողոց:

— Ահա քանի ժամ է, որ ես քեզ փնտրում եմ: Ե՛լ
գինետուն չըմնաց, որ ես մտած չըլինեմ:

Կրպօն — այդպէս էր երիտասարդի անունը — դար-
ձեալ չըխօսեց: Նա սաստիկ դժգոհ էր, որ իրան այդ-
պէս հսկում, այդպէս հետամուտ էին լինում: Միթէ
ինքը ազատ չէ՞ իր ցանկացածն անելու: Հայրենակից-
ների, մանաւանդ այս Մելքոյի անչափ հոգացողութիւ-
նը իր համար մի բեռ էր դարձել, մի ծանր բեռ:

Երեք շաբաթ է անցել այն օրից, երբ Կրպօյին
յայտնի եղաւ իր կորուստը: Անփոխարինելի կորուստ:

Որպէս բշուժ, տանում են տաւարի մի ամբողջ
նախիր, գիւղի մի խումբ աղջկերանց հետ միասին
բռնել, տարել էին և իր նշանածին: Իսկ իր խեղճ մայ-

ըր, որ համարձակել է ընդդիմանալ, տեղն ու տեղը սպանել է նոյն յափշտակիչների ձեռքով:

— Տուն ու տեղս տարաք՝ ձեզ հալալ: Մրան չեմ տայ. սրան չըպիտի տանէք: Սա իմն է, սա իմ որդու, իմ Կրպոյի կիներն է...

Դաշոյնի մի երկու հարւած վայր գցեցին, թողեցին ապարախտ մօրը արեան մէջ շաղախւած:

Եւ ահա երեք շաբաթ է, որ Կրպօն թողել, հեռացել էր գործարանից և՛ գժւած, խելագարւած, թափառում էր Նիւ-Եօրքի փողոցներում և այգիներում: Ման էր գալիս նա, պտրտում, բայց ոչ մի տեղ հանգստութիւն, դադար չէր գտնում: Ի՞նչ անէր, թր ջուրն ընկնէր, որ վերջ դնէր իր ներսը այրող, իրան լափող ցաւերին: Նա պարզ աչքով լուսացնում էր ամբողջ գիշերներ: Անկողինը կարծես փշից լինէր հիւսւած: Կըրպօն վեր էր ցատկում, փախչում, դուրս գալիս փողոց և, որպէս մի լուսնոտ, դեգերում մայթերի վրա:

— Նանէ ջան, նանէ. այս ի՞նչ գուլում է, որ մեզ հասաւ, այս ի՞նչ կրակ է, որ մեր գլխին մաղեց, — փնթփնթում էր նա գիշերային խաւարի մէջ՝ մազերը փետտելով:

Ութ օր էր ահա, որ երիտասարդը գտել էր այն ճարը, որ նա որոնում էր այնպէս անդադար:

Կրպօն սկսել էր խմել:

Բայց քանի խմում, այնքան աւելի էր այրւում նրա սիրտը: Նա դարձեալ խմում էր: Խմում էր, մինչև որ թմրում, ընկնում էր գետնի վրայ: Միայն այդ ժամերին էր նա մոռանում և՛ հայրական օջախ, և՛ մայր, և՛ նշանած, և՛ իրան: Այդպիսի գիշերներ նա անցրել էր միքանի անգամ: Երեք օր էր, որ Կրպօն կորած էր: Ո՛ւր էր, թրտեղ էր նա: Ոչ ոք չըգիտէր: Նրա հայրե-

նակիցները ընկել էին ամբողջ քաղաքը և տակն ու վրա էին անում: Չըկար: Միայն չորրորդ օրւայ լուսաբացին Մեկթօն, որ իր բանը-գործը թողած՝ թշուռ ընկերով յետևիցն էր ընկած, նրան գտաւ մի գինետան առաջ՝ մայթի վրայ պառկած քնած, գրեթէ կիսամերկ. ոչ հագուստ, ոչ գլխարկ, ոչ ժամացոյց: Հանել, գողացել էին արդեօք, թէ՞ Կրպօն ինքն էր ծախել...

Կրպոյին տուն բերին: Խրատ, կշտամբանք, կոշտ լսութիւն: Բայց այդ ամենը անօգուտ էր անցնում: Նա դարձեալ խմում էր, դարձեալ օրերով անհետանում:

Մի անգամ Կրպօն երկու օր տանը մնաց: Հայրենակիցները կշտամբանքն էր ազդել արդեօք, թէ՞ Մեկթօյի աղաչանք-պաղատանքը... Մտքերի մէջ խորասուզւած, քաշել էր սենեակի մի անկիւն, ամբողջ ժամերով լճու, անխօս նստած էր նա:

Երրորդ օրւայ առաւօտեան նա դուրս եկաւ տանից և քայլերն ուղղեց տեղային մի բանկ, ուր դարձնւում էր նրա վեց տարւայ աշխատած խնայողութիւնը:

Այդ գումարով Կրպօն երկիր պիտի վերադառնար. պսակւէր, նոր տուն, նոր օջախ հիմնէր... Ի՞նչ յոյսերով, ի՞նչ սրտով էր նա կեղտ ու մուրի մէջ տնքալով փող աշխատել, իր բերանից-շորից կտրելով, շաբթէ շաբաթ մի քանի դօլլար ժողովել, ամսի գլխին տալի, այն բանկին յանձնել: Ինչէր չէր նա երազել, որ պիտի ամբողջներ չէր նա կառուցել իւրաքանչիւր անգամ փողը գրպանում բանկ գնալիս... Եւ այժմ նա՝ Կրպօն գնում է նոյն բանկը... փողը յետ վերցնելու... Ինչո՞ւ, ո՞ւր համար... Նրա գլուխը այրւում էր, սիրտը կծկւում, սեղմւում, ահա, կարծես, պատառ-պատառ պիտի լինէր: Կրպօն՝ հասնելով բանկի գեղեցիկ մեծ

շինութեանը, թուրացած, ուժասպառ ընկաւ նրա մարմարէ սանդուխներէ վրա: Մի քանի ըոպէ նա մնաց այնտեղ անշարժ: Նա չէր կարողանում, նա չէր ուզում բարձրանալ:

«Ինչո՞ւ պահեմ, որ օրւայ և ո՞ւմ համար», — մտածեց պանդուխտը: Ոյժ գործ դնելով՝ վճռողաբար ցատկեց նա տեղից և՛ շտապ-շտապ սանդուխները բարձրանալով, մտաւ բանկը:

Կէս ժամ չանցած Կրպօն գանձը ձեռքին տուն էր շտապում: Տանը ոչ ոք չըկար: Պանդուխտները բոլորն էլ գործարանումն էին: Նա մտաւ իր սենեակը, վերցրեց իր անկողինը, սնդուկը և կոփ նստելով՝ տեղափոխեց հայերի բնակատեղից հեռու, քաղաքի մի այլ մասը: Այս բոլոր գործողութիւնները այնպէս արագ, այնպէս շտապով էին, որ նա կարծես գողութիւն էր անում:

Այժմ Կրպօն ազատ էր: Նրան այլևս չեն հսկիլ, չեն պարսաւիլ և չեն նախատիլ:

Եւ երիտասարդը շարունակեց իր սկսածը:

Նրա ընկերը, միակ անփոփոխ հաւատարիմ և մըտերիմ ընկերը այժմ օդին էր: Միայն երբեմն-երբեմն մի ձայն նրա ականջին ինչ-որ կշտամբանք, մեղադրանք էր մըմնջում, աղերսում, խնդրում... Մեկքօյի ձայնն էր այն: Կրպօն ճանաչում էր այդ ձայնը. ականջ էր դնում նրան. մտածում, խորհում էր և վճռում ձեռք վերցնել այդ անառակ կեանքից, ոտքի կանգնել, փոխել, ուղղել...

— Բայց ո՞ւմ համար, — ցցւում էր յանկարծ անողք հարցը նրա առաջին: Եւ Կրպօն քայլերը նորից ուղղում էր դէպի գինեւան:

Այդպէս անցան շաբաթներ, ամիսներ:

Կրպօն գինեւանները յաճախելիս իրան միշտ հեռու էր պահում մարդկանցից, մտնաւանդ կանոնացից: Նա քաշոււմ էր ընդհանուր դահլիճի մի անկիւն, այնտեղ ընտրում մի փոքրիկ սեղան, մօտը նստում: Սպասաւորը բերում էր վիսկիի շիշը, բաժակը և հեռանում: Կրպօն խմում էր լուռ ու համր և անընդհատ ծխում: Ոչ ոքի հետ չէր խօսում: Իրան ուղղած հարցին նա պատասխանում էր հակիրճ և կտրուկ՝ այդպիսով վերջ դնելով սկսեող խօսակցութեան և ծանօթութեան: Մարդկանց հետ շփոււմ էր, մարդկանց մէջ շրջում, բայց միշտ առանձնացած, միշտ կղզիացած, միշտ միայնակ: Յաճախ նա ներկայ էր լինում կուլի, վէճի, քստմեկի, երբեմն և՛ վեհ, և՛ սրտառուչ տեսարանների. բայց նա, կարծես, խուլ էր, կոյր և համր... Նա ոչինչ չէր տեսնում, նա ոչինչ չէր լսում: Անտարբեր, անզգայ, անուշադիր՝ միմիայն իր, իր մտքերի, իր ցաւերի մէջ ընկղմւած, վերացած, հեռացած էր այս աշխարհից: Ոչ ոքին չէր տջողում նրան մօտենալ, մտերմանալ: Իսկ ցանկացողներ շատ: Բայց Կրպօն միշտ խոյս էր տալիս:

Միայն մի կին՝ ահա քանի օր է նրանից ձեռք չէր քաշում: Հագնւած, զուգւած՝ գալիս էր նա գինեւան, դնում նրա դիմացի նստարանի վրա նստում, մի բաժակ դարեճուր պահանջում. ապա աչքը յառած պանդխտին, ամբողջ ժամերով չէր հեռանում այնտեղից: Կրպօն գլուխը քարշ արած՝ սկզբի օրերում չէր էլ նկատում: Երբ կանադացի այս կինը առանց քաշելու սկսեց մէկ մէկի վրա հարցեր տալ նրան, խօսել, երբեմն ժպտալ... Տղան մնացել էր շարած: Մի, երկու... «Բաւական չէ. ինչ է ուզում այս կինը ինձնից» — մտածեց նա և թթւած կրեւը ծոցը նրանից:

Մի երեկոյ, շաբաթ օր էր, գինեւանը սովորական

սեղ աւելի աղմկալի էր: Մարդ, կին խառնւած՝ որը հարբած, որը սեղանի վրա կանգնած, որը քնած, որն էլ երգելիս: Մի այլ տեղ վէճ, փոխադարձ սուր յիշոցներ, ապտակ... Ծխախոտի ծխով լցւած դահլիճը մի կատարեալ քառու էր ներկայացնում: Գիշերայ ժամի մօտ 12-ն էր: Կանադուհին աննկատելի կերպով եկաւ, մօտեցաւ Կրպօն, քնքոյշ, փաղաքշական ձայնով խնդրեց նրանից նախ մի ծխախոտ, ապա երկու բոպէ չանցած և մի բաժակ օղի: Կրպօն կատարեց նրա խնդիրքը: Առիթից օգտուելով՝ կանադուհին բոլորովին մօտեցաւ, կպաւ պանդխտին և բաժակ բաժակի խփելով՝ խմեց նրա կենացը: Կրպօն մեքենայաբար հետեց նրա օրինակին: Նա արդէն հարբած էր. խորամանկ կինը կրկին խմեցրեց...

Իսկզբէն և երբ դուրս եկան նրանք գինետնից՝ Կրպօն ոչինչ չէր յիշում: Միայն հետեւեալ օրը, ժամը 2-ին՝ զարթնելիս, տեսաւ նա, որ իր սենեակումը չէր, այլ մի անծանօթ տեղ: Անկողնում պառկած ապուշ-ապուշ նայում էր նա իր շուրջը՝ մի յստակ, մաքուր, կոկիկ զարդարած գեղեցիկ սենեակ, և չէր կարողանում իրան հաշիւ տալ՝ թէ ռոտեղ էր ինքը, ռուր էր ընկել: Դարձաւ նա դէպ ձախ և տեսաւ այնտեղ՝ իր կողքին, միեւնոյն մահճակալի վրա մի կին, գրեթէ մերկ պառկած, քնած՝ ձեռքը դրած մերկ, գեղեցիկ կրծքին, որի վրա թափթփւած էին ոսկեգոյն երկար մազերը: Ճանաչեց Կրպօն այդ դէմքը և յիշեց ամեն բան...

Նա բարձրացաւ տեղից և սկսեց շտապով հագնել: Կինը զարթնեց և զարմացած հարցրեց.

— Ի՞նչ ես անում... Ո՞ւր ես գնում:

Կրպօն ոչինչ չըպատասխանեց: Կանադուհին վեր կացաւ անկողնուց, մօտեցաւ Կրպօնին և երկու ձեռքով

կախելով նրա շինքից, ցանկացաւ փայփայել, գգել, համբուրել նրան: Բայց երիտասարդը զգանքով դէն հրեց նրան, կինը յետ ու յետ գնալով՝ ընկաւ մահճակալի վրա: Գործաւորի օտարոտի, կատաղի հայեացքը գամեց, մեխեց նրան իր տեղում: Նա անկարող եղաւ մի բառ անգամ ասելու: Կրպօն հագնեց թէ չէ՝ դուրս թռաւ սենեակից՝ դուռը յետևից աղմկով փակելով: Կինը մնացել էր ապշած-սառած:

Բայց մի շարաթ չանցած կանադուհին կրկին նրան գտել, ճանկել էր... Եւ այնուհետեւ նրանք անբաժան էին:

Մեկքօն և մի այլ պանդուխտ, որ ամիսներ շարունակ որոնում էին Կրպօնին, մի գիշեր նրան գտան գինետան մէջ հարբած, ձեռքը գցած մի կնոջ վրով՝ նրան համբուրելիս և ինչ-որ անկապ բառեր բարբառելիս...

Տեսնելով Կրպօնին այդ դրութեան մէջ՝ պանդուխտը, ամբողջ ուժով դուրս հրելով Մեկքօնին, զգանքով հեռացաւ գինետնից՝ առանց մի խօսք անգամ ուղղելու իրանց հայրենակցին:

— Կորսւաւ տղան, — մրմնջաց Մեկքօն երկար լուսթիւնից յետոյ:

— Թող կորչի: Այսուհետեւ այլևս ոչ ոք չը համարձակւի նրա անունը արտասանել, — պատասխանեց միւս պանդուխտը: «Ո՞ւր մնաց Կրպօն, ինչ եղաւ խեղճը. լճնչ պատահեց նրան»... Տեսնիր այժմ: Դէհ, բաւական է:

— Ախր, քեռի, մի՞թէ նա առաջ այդպէս էր, — Մեկքօն փորձեց արդարացնել իր ընկերոջը:

— Ինձ համար այդ միևնոյն է. ի՞նչ է նա այժմ... Նրա անունը այլևս իմ ականջը չը լսէ, հասկանում ես, — հրամայեց վրդովւած ձայնով հին բանտորը և լուռ շարունակեց իր ճամբան: Մեկքօն էլ լուռ էր, մտախոհ և տխուր:

Այդ գէպքից երկու ամիս չանցած Կրպօն մի օր յայտնեց իր հայրենակիցներին շրջանում: Նա ծախսել էր իր վերջին սենթը: Կանադուհին այլևս չուր հետ չէր: Դրամները անհետանալով՝ նա ձգել թողել էր պանդըխտին: Կրպօն ծախել էր իր ժամացոյցը, իր կիրակնօրեայ հագուստը, նոյն իսկ իր վրայի շորերի մի մասը: Երբ արդէն այլևս ոչինչ, ոչինչ չունէր շոյալելու, նա, կարծես, քիչ զգաստացաւ: Այդ միջոցներին տանտէրը՝ վերցնելով Կրպօյի անկողինը, անդուկը, վունդեց նրան բնակարանից, որի երեք ամսւայ վարձը չէր վճարւած:

Կրպօն մնաց դուրսը և այժմ անտուն, անփող թափառում էր Նիւ-Եօքքի փողոցներում, գիշերում մայթերի վրա կամ այգիներում՝ ծառերի տակ...

Յոգնած, ընկճւած, ձեռքը ծոցին նստած էր նա Մադիզօն պարտէզ-սկէնի մի անկիւնում: Մարդիկ շտապ-շտապ անցնում, գնում էին: Յանկարծ մի պարոն՝ խղճահարւած մօտեցաւ, ձեռքը տարաւ գրպանը և մի գրամ հանելով՝ մեկնեց պանդխտին:

Կարծես, մի հարւած էր, որ ստացաւ Կրպօն, և ոչ փող: Որպէս շանթահար եղած, ցատկեց նա տեղից և ամբողջ ուժով շարտեց գրամը բնքոյշ ջննալմէնի յետեից: Գնաց գրամը գնդգնդալով և ընկաւ փողոցի մի փոքրիկ խոտից:

Պանդուխտը տենդային անհանգստութեան մէջ սկսեց արագ-արագ քայլել սկէնի ալլէյում: Ման էր գալիս նա և ինքն իրան խօսում.

— Մուրալ, ձեռք կարկառել... ողորմութիւն հայցել... Երբէք, հեռո՛ւ, հեռո՛ւ ինձանից մութացկանութիւն:

«Այն փողով ես հաց կարող էի գնել»,—մտածեց

նա:—Մուրալ...—կրկնեց Կրպօն և մի սարսուռ անցաւ նրա մարմնով: Այժմ միայն նա նկատեց այն վիհը, որի ափին էր նա գտնւում: Տեսաւ Կրպօն այն անդունդը, և սոսկաց:

—Ինչպէ՞ս եմեմ, ինչպէս բարձրանամ,—հարց տւաւ նա ինքն իրան: Գործարան գնալ: Բայց ի՞նչ երեսով, ի՞նչ սրտով և... ի՞նչ համար, ի՞նչ... Ո՛հ, այս ի՞նչ տանջանք է, որ ես եմ քաշում. այս ի՞նչ կեանք է, այս ի՞նչ դրութիւն է:

—Էլ ինչո՞ւ կը խնայես, եաման Սատւած. գնա՛րկ, գնա՛րկ ինձ ալ, ռի՛հ համար կը պահես...

—Պայթի՛ր, պատառի՛ր, սիրտ իմ. բռնի այլևս, փոթոթես ինձ: Ո՞ւր գնամ քո ձեռից. ի՞նչ անեմ...

—Ի՞նչ անեմ,—կրկնեց Կրպօն՝ ճակատը շփելով: Նա քաշեց այգու խորքը, նստեց մի նստարանի վրա և գլուխն առնելով ձեռքերի մէջ՝ մնաց խորհելիս:

Մութն ընկել էր արդէն: Փողոցների շարժումը խտացել, սաստկացել էր: Տրամուէյների (ձիաքարշ), օդային երկաթուղու բաղմաթիւ գնացքների սուրց-դըրդիւնը, լրագրավաճառների, կառապանների կոչ ու աղաղակը օդը լցրել էին խլացուցիչ աղմկով և մի խուլ, մի վեհ դըրդիւն-որոտմունքով:

Կրպօն՝ անտարբեր ու անուշադիր իր շուրջը անյողդողդ հոսող, վխտող կեանքին, նոյն տեղը, նոյն դիրքի մէջ նստած, կարծես, նիրհում էր:

Գլխած, մոլորւած բարձրացաւ նա և՛ յամր, դանդաղ քայլերով դուրս գալով սկէնից, ուղղեց գէպի իր նախկին բնակարանը, հայրենակիցների մօտ:

Շաբաթ օր էր, գործաւորները ընթրիքից յետոյ նստած՝ սրը ծխում էր, սրը մտքերին անձնատուր եղած

ներհուս, որը լրագիր կարգում, մի երկուսն էլ նրան լսում. մի երիտասարդ էլ անգլիերէնի ձեռնարկը առջևը դրած՝ կիրակնօրեայ դպրոցի դասն էր պատրաստում։
Մտնում է Կրպօն։

Նրա այդպէս անակնկալ երևան գալը, նրա պատրուած շորերը, չըսանրած, գզգզած մազերը, այլայլւած, փոխւած, կեղտոտ դէմքը շփոթ և իրարանցում գցեց պանդուխտների խղճուկ սենեակում։ Դա նախկին Կրպօն չէր, այլ նրա ահռելի ուրւականը։ Բանտորները տեղներէց վերկացան և աթոռները առնելով՝ բնազդմամբ յետ—յետ քաշեցին։ Կրպօն մնաց սենեակի մէջ կանգնած։ Նա ոչ ոքի չը բարևեց. մի վայրկենական հայեացք գցելով շփոթւած հայրենակիցներէ շարքին՝ բացականչեց։

—Ա՛հ, դուք ինձնից խորշում էք, նոյն իսկ վախեցում... փողոցում պատահելիս զգւանքով ինձնից երես ծռում. ծաղր ու ծանակ շինած՝ ինձ ատում, ինձ արհամարհում էք՝ ասելով որ ես անբարոյական, ես անառակ եմ. գինեմոլ, ծոյլ, թափառաշրջիկ, անդադր, առնամթ... Հոգ չէ... Եւ իրաւունք ունէք։

Նա մտածմունքի մէջ ընկաւ։

—Բայց միթէ առաջ ես այդպէս էի, —շարունակեց նա թախծալի ձայնով, որի ամեն մի հնչիւնից անկեղծութիւն էր շնչում։—Օ՛հ, չը կարծէք՝ թէ այժմ էլ ես զինովցած՝ օդի ազդեցութեան տակ եմ այսպէս խօսում։ Երկու օր է, որ ես մի կտոր հաց չեմ դրել բերանս, ուր մնաց օդին։—Միթէ աղէտից առաջ ես երբ իցէ անցել եմ գինետան շէմքից։ Միթէ ես աննպատակ շրջել եմ փողոցից փողոց, հրապարակ, հասարակական այգիներ... Միթէ մօտեցել եմ ես երբ և իցէ օտարուհիներին։ Թէ երկրում և թէ այստեղ՝ վեց տա-

րի պանդխտութեան մատնւած, ես անարատ, ես կոյս էի մնացել, կոյս, հասկանում էք՝ կոյս որպէս մեր մայրերն են եղել, կոյս՝ որպէս մեր աղջկերքն էին, որ այժմ տաճկի և քրդի բաժին են դարձել...

Կրպօն լռեց։ Կիսամերկ, գզգզած, ցնցոտիներէ մէջ փաթաթւած կանգնած էր նա սենեակի միջին։ Շուրջը պանդուխտները աչքերը յառած նայում էին այդ թշառին, որ, ինչպէս մի մարմնացած բողոք, ցցւած էր իրանց առաջին։

—Կարծում էք թէ ես չեմ տեսնում, ես չեմ զգում իմ անկումը... Բայց ի՞նչ անէի ես, երբ միտս էին ընկնում, երբ աչքից—մտքիցս չեն հեռանում մօրս ուրւականը, նշանածս, իմ սիրածը... Ո՛ւր է նա այժմ, սէր. ձեզ եմ հարցնում,—բացականչեց Կրպօն խոպոտ ձայնով և թուլացած ընկաւ մի աթոռի վրա։ Տիրեց մի ծանր և ճնշող լութիւն։

—Բայց միթէ մենք քեզանից պակաս ենք փրատւել,—ընդհատեց այդ լութիւնը մի բանւոր։—Սակայն մենք մորմոքւելով հանդերձ՝ մի կերպ միասնացում ենք մեր սև օրերը։

—Ճիշտ ես նկատում դու, եղբայր. քեզ հասած հարւածը սոսկալի էր և անգութ։ Բայց դու գոնէ երկու փոքրիկ որբիկներ ունես. գոնէ նրանց համար աշխատելով՝ նրանց յուսով կապրես։ Իսկ ես... ես... Ա՛խ, եթէ դուք կարողանայիք գէթ երևակայել՝ թէ ինչ է կատարւում այստեղ՝ այս կրծքի տակ, դուք ինձ չէիք մեղադրիլ, ինձ չէիք ատիլ։ Ի՞նչ անէի ես, որ քարը տայի գլխիս, որ ջուրն ընկնէի։

Նա ծխախոտ խնդրեց և ծխիկների վրա կռթնելով՝ սկսեց ազահարար ծխել։ Ոչ ոք տեղից չէր շարժւում.

լուռ էին բոլորեքեան: Միայն քամին դուրսը շառաչում, ոռնում էր կատաղաբար:

— Դէհ, ես գնում եմ, — ասաց Կրպօն երկար լուռ-թիւնից յետոյ տեղից բարձրանալով:

— Ո՛ւր, որտեղ գիշերւայ այս պահուն, — մօտ գալով հարցրեց Մելքօն, որ հեռւից լուռ, երկար դիտում էր իր նախկին ընկերոջ: — Մնա այստեղ, մեզ մօտ, վաղը կը գնաս:

— Ո՛չ. վաղը լուսադէմին ես պիտի մեկնեմ Բօստօն: Այս քաղաքում մնալ ես այլևս անկարող եմ: Ես եկել էի միայն ձեզ տեսնելու և հրաժեշտի վերջին ողջոյն տալու... Է՛հ, աշխարհ է... ո՛վ սաղ, ո՛վ մեռած... մէկ էլ միմեանց պատահեց... Մնաք բարով, բոլորեքեանդ: Տո՛ւր ձեռքդ ինձ, Մելքօ: Ես գիտեմ, որ դու ինձ չես ատում: Չէ՞ որ մի ժամանակ մենք մտերիմ ընկեր, եղբայր էինք. — ասաց նա՝ ձեռքը պարզելով Մելքօյին, որին գրկեց և յուզւած, արցունքները հազիւ գսպելով, միքանի անգամ համբուրեց:

Մելքօն ընկերոջ ձեռքը բռնած նոյնպէս զգացւած, արտասուխառն ձայնով խնդրում էր նրան իրանց մօտ գիշերել: Խորը յուզւած էին և բոլոր պանդուխտները:

Կրպօն՝ տեսնելով որ Մելքօյից հեշտ չէր ազատուելու, դիմեց նրան.

— Գիտես, ես ճանապարհածախս չունեմ. տո՛ւր ինձ չորս դօլլար պարտք. Բօստօնից կուղարկեմ:

Մելքօյի բոպէական կամկածները, կարծես, փառաւեցին: Նա հանեց գրպանից 5 դօլլարանոց թղթադրամ և մեկնեց ընկերոջը, որ փողը վերցնելով, կրկին սեղմեց Մելքօյի ձեռքը: Ապա մօտեցաւ և մէկ-մէկ բարեկց բոլոր պանդուխտներին:

— Մնաք բարով, — կրկնեց նա՝ շտապով դուրս գալով սենեակից:

— Վաղը լուսադէմին ես էլ կայաբան կը գամ, — ասաց Մելքօն նրա յետևից:

— Բարի ճանապարհ, — գոչեցին բոլորեքեան:

Ուշ գիշեր էր արդէն: Քաղաքի անցուղարձը դադարել էր. հազիւ միքանի մարդ էին այստեղ-այնտեղ երևում: Յուրտ էր: Քամին դեռ փչում էր մոլեգնաբար: Կրպօն արագ-արագ քայլելով շտապում էր Բրօդ-վէյ փողոցով դէպի վար: Նա ուշ չէր դարձնում բնութեան խժեղութիւններին: Միայն նրա ցնցոտիներն էին, որ քամու հետ մարտնչելով՝ կուռւում, դիմադրում էին, վերջին ձիգն էին թափսււմ, ամուր սեղմւում, կըպչում իրանց տիրոջ նիհար, վտիտ մարմնին, նրան պահում, պահպանում:

«Բարի ճանապարհ», — յիշեց Կրպօն հայրենակիցների վերջին բառերը, և մի դառն հեգնական ժպիտ նկատեց նրա դալկացած, օղիից արդէն կնճուած դէմքի վրա: «Բարի ճանապարհ», — մըմնջում էր նրա ականջին և քամին:

Շտապում էր Կրպօն դատարկ, ամայի փողոցներով: Մինչ նա՝ հրաբուրբոք տենչով բռնկւած, շտապում, վազում էր միքանի բոպէ շուտ հասնել օրհասական այն սուրբ վայրը, նրա խոովայոյզ, անհանգիստ միտքը՝ ուլկիանալով կտրելով թռչում, գնում է հեռու, հեռու՝ հայրենի երկիրը: Յիշողութիւնների մի ամբողջ ծով էր բացւում նրա առջև, որի մեղմ, հանդարտ ալիքները ոլորուն ելեջներով գալով, դարձնելով ափերին, շոյում, գլուխ էին պանդխտին: Նա պարզ տեսնում էր իրանց տունը, իրանց այգին. ահա և տաւարը, երեկոյեան դէմ,

բառաչելով տուն է շտապում. ահա և իր մայրը՝ թե-
բերը ծալած, կովկիթը ձեռքին մօտենում է. ինքը՝ փոք-
րիկ, կայտառ կրպօն, վազում, հորթի կապն է բանում...
Մանկութիւնը, քաղցր հրապոյրներով լի իր ամբողջ
մանկութիւնը անցնում է նրա առջեւից: Ահա և մեծ
տղայ դարձած, գրեթէ երիտասարդ-տղամարդ... խնա-
մախօս, նշանդէք...

Պատկերը չքանում է: Տխուր իրականութիւնը
ցցւած էր նրա առաջ: Կրպօն հասել էր Բրոնկիինի կա-
մուրջին: Մի սառը, մի անսովոր ցնցում անցաւ նրա
ամբողջ մարմնով: Նայեց նա ներքեւ՝ հանդարտ, դանդա-
ղահոս Իստ-Րիվէր գետին, որի ափերին բազմած երկու
վիթխարի քաղաքները՝ գեղեցիկ լուսաւորւած, մի
հրաշալի, մի չքնաղ տեսարան էին ներկայացնում գի-
շերւայ այդ խորհրդաւոր ժամին:

Կրպօն լուռ, անխօս, ձեռքի շարժումով կարծես
գլխից մի միտք վանելով, վճռողաբար, առանց տա-
տանւելու, մագլցեց կամուրջի երկաթէ ցանկապատը և
այնտեղից, այն ահռելի բարձրութիւնից մի սուր ճիչ
հանելով՝ նետւեց գետը:

Կորաւ այդ ձայնը գիշերային խաւարի մէջ և նո-
րից տիրեց խորին լուռութիւն, որ երբեմն խանդարւում
էր Իստ-Րիվէրի մեղմ, ներդաշնակ ծփանքով:

Գիտը մի փոքրիկ յորձանք տւաւ միայն և խա-
ղաղ, անխռով՝ ալիքների մէջ գուրգուրալով տարաւ
պանդխտին դէպի ծով, դէպի անհուն ովկիանոս:

ԲԺ. Ը. ԲՈՒԳՈՒԳԵԱՆԻ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

1. Առաջին օգնութիւն մինչև բժշկի գալը (սպառ)	5 կ.
2. Վարակիչ հիւանդութիւններ	5 »
3. Ի՞նչ է սիֆիլիսը	5 »
4. Առողջապահական զրոյցներ	5 »
5. Ի՞նչ է ժուժկալութիւնը	5 »
6. Ի՞նչ է անառակութիւնը	5 »
7. Վեներական ախտեր	2 »
8. Աշակերտի առողջապահութիւն	0 »
9. Մեր նեարդերը	10 »
10. Սիֆիլիս (բարեփոխում)	10 »
11. Առողջ հոգին առողջ մարմնի մէջ	10 »
12. Գեղձախտ (գոլոտուխտ)	15 »
13. Ո՞վ է յանցաւորը	15 »
14. Կարիք և բարեգործութիւն	15 »
15. Ժառանգականութիւն և դաստիարակութիւն	15 »
16. Մանկավարժական համառօտ զրոյցներ	10 »
17. Մարմնամարզութիւն (25 պատկերով)	20 »
18. Առողջապահական նուէր նորատի կանանց	25 »
19. Կիւնը և տղամարդը	15 »
20. Վիրարութեան հիւանդութիւն և օպերացիա	15 »
21. Ի՞նչ է կաշու հիւանդութիւնը	15 »
22. Երիտասարդութիւն և ծերութիւն	20 »
23. Առողջ ու հիւանդ երեխայի ոգին	20 »
24. Ուղեղի սիֆիլիսը (գլխի և ողնաշարի)	20 »
25. Ստամոքսի կատարբը	25 »
26. Քուն և երազ (մի պատկերով)	10 »
Մեծագիր պատկեր «Քուն և երազ» առանձին	15 »
27. Գործարան թէ՛ երկրագործութիւն	20 »
28. Մնապաշտութիւն ու կախարդութիւն	20 »
29. Մտերմական խորհուրդներ պատանիներին	20 »
30. Գոյութեան կռիւ	25 »
31. Վիրխով	20 »
32. Սէր և խանդ (մի պատկերով)	20 »
33. Անառակութիւն և սրտնկութիւն	20 »

ԴԻՄԵՆ՝ Գրավաճառներ

Մամուլի տակ է ՆՈՒՆԻ ՀԱՅ Զ.

«Ազգային գրադարան



NL0358805

Ժողովրդական գրքոյկներ

1. Դեմիրճեան. Գ. Ուխտաւորներ, Աշուղի հէքիաթը. պատմաւածքներ 7 կ.
2. Վերեսաւել. Վ. Մի անմեղ մարդու սոսկալի մահը, թարգմ. Պ. Պոռչեան . 6 կ.
3. Շիւեանց Ս. Մի մահ և Անառակը. պատմաւածքներ 7 կ.

ՀԵՐԻԱԹՆԵՐԻ ԱՇԽԱՐՀ

պատկերազարդ սերիա

1. Ղազ. Աղայեանի. Գիւլնազ-տատի հէքիաթը, Այծառուր, Զանգի-Զրանգի, Մահուկ-Խան 15 կ.
2. » » Եղեգնուհի, Անտառի մանուկը, Ասլան-Բալա 15 կ.

ՀԱՅ ԲԱՆԱՍՏԵՂԾՆԵՐ

ընդհանուր վերնագրի տակ հետզհետէ լոյս են տեսնելու առանձին գրքոյկներով մեր բանաստեղծների լաւագոյն ստեղծագործութիւնները: Արդէն հրատարակւած են

1. Յովհան. Թումանեանի Սասունցի Դաւիթը . 15 կ.
2. » » Անուշ . 15 »
3. » » Լեզհեղներ . 15 »
4. Շանթի Երգեր . 15 »
5. » Լեռան աղջիկը . 15 »

ԳԻՆՆ Է 7 ԿՈՊ.

ԴԻՄԵԼ ԴՐԱՎԱՃԱՌՆԵՐԻՆ

Հրատարակութիւնների պահեստ՝ Թիֆլիս, Товарищество „Ст. Лисицианъ и К°“. (Бебутовская ул. 29) և Типографія „Гермесъ“ (Мадатовская ул. 15).



48427